



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

20 դեկտեմբերի 2019 թվականի թիվ 147-Ա

ք. Երևան

«ԱՅԹԻՎԻ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈՉ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌՈՒՍՏԱԾՐԱԳՐԵՐ ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի և 52-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով «ԱՅԹԻՎԻ» ՍՊ ընկերության ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն ստանալու մասին 2019 թվականի դեկտեմբերի 5-ի դիմումը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Բավարարել «ԱՅԹԻՎԻ» ՍՊ ընկերության դիմումը և տալ ոչ սեփական հեռուստածրագրեր վերահեռարձակելու թույլտվություն՝ հեռուստածրագրերի վերահեռարձակման իրավունքը հավաստող փաստաթղթերի գործողության ժամկետով՝ համաձայն Հավելված 1-ի և Հավելված 2-ի:

2. Սահմանել, որ Հավելված 1-ում ներկայացված հեռուստածրագրերը կարող են վերահեռարձակվել միայն Գավառ քաղաքի տարածքում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՍԱՐ

Վ. ՕՉԱՆՅԱՆ

Հեռուստաձրագրի անվանումը	Թույլտվության ժամկետի ավարտը
«Պերվիյ կանալ: Վսեմիրնայա սետ» «Կարուսել Ինթերնեյշնլ» «Վրեմյա. Դայոկոյե ի բլիզկոյե» «Տելեկաֆե» «Մուզիկա պերվոգո» «Մատչ! Պրեմիեր» «Կինոպրեմիերա» «Կինոմիկս»	31.12.2019թ.
«Ֆուտբոլ» «USU» «Ռեն ՏՎ» «Պերեց» «Դոմաշնիյ» «ՌԲԿ» «5 Կանալ» «Իզվեստիյա»	31.12.2019թ.
«Բոկս ՏՎ» «Ինդիյսկոյե Կինո» «Ռուսսկայա Նոչ» «Ավտո Պլյուս»	31.12.2019թ.
«Eurosport» «Discovery Science» «РТР-Планета» «Россия -24»	31.12.2019թ.
«Միր»	անժամկետ
«National Geographic» «Nat Geo Wild» «Fox»	անժամկետ

Հեռուստաձրագրի անվանումը	Թույլտվության ժամկետի ավարտը
«НТВ Мир» «Шансон-ТВ» «Наука 2.0» «История» «Техно 24» «Доктор»	31.12.2019թ.
«Կինոման» «Ֆիլմ Zone» «ԽաղԱլիք» «Հայ TV» «Թավա TV»	անժամկետ